ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆ ՈՒ ՏԱՐԵԳԻՐԸ
(Վլադիմիր Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ Վլադիմիր Աղասու Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակը:

Վ. Կիրակոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 20-ին Լենինականում: 1944–1954 թթ. սովորել է քաղաքի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում: 1954–1959 թթ. սովորել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնում: 1959–1962 թթ. ուսուցիչ է աշխատել Ապարանի շրջանի դպրոցներում: 1962–1966 թթ. սովորել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1966 թ. աշխատում է Գրականության ինստիտուտում: 1994–2009 թթ. եղել է ինստիտուտի փոխտնօրենը:

Վ. Կիրակոսյանը 1967 թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել «Ռուբեն Սևակ (կյանքը և ստեղծագործությունը)», իսկ 1989 թ. դոկտորական ատենախոսություն՝ «20-րդ դարասկզբի արևմտահայ պոեզիան» թեմաներով:

Վ. Կիրակոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գլխավորաբար XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականությունը: 1972 թ. լույս տեսած «Ռուբեն Սևակ (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրության մեջ Հայոց մեծ եղեռնի զոհ արևմտահայ բանաստեղծի ստեղծագործությունները դիտարկվում են XX դարասկզբի արևմտահայ գրականության ընդհանուր համատեքստում: Գեղարվեստական վերլուծությունը զուգակցելով պատմական մոտեցման հետ՝ հեղինակը ցույց է տալիս, թե Սևակի պոեզիայում հասարակական խնդիրների գեղարվեստական մեկնաբանությունն ինչպես է տրվել նոր և ինքնատիպ եղանակներով: Վեր են հանվում բանաստեղծի ստեղծագործությունների թեմատիկ լայն շրջանակը և գրական-գեղարվեստական այն բոլոր արժանիքները, որոնց շնորհիվ Սևակը Սիամանթոյի, Վարուժանի ու Մեծարենցի կողքին պահպանեց ինքնատիպությունը և ուրույն դիմագիծը: Գրքում քննվում են նաև գեղագիտական ու աշխարհայացքային բնույթի հարցեր:

Մինչև Հայոց մեծ եղեռնը Ռուբեն Սևակը ծրագրել էր հրատարակել բանաստեղծական հետևյալ հինգ շարքերը՝ «Կարմիր գիրք», «Վերջին հայերը», «Քառսը», «Չհասկաց-

վածները» և «Միրո գիրքը»: Իր եղերական վախճանից առաջ նա հասցրեց հրատարակել միայն առաջինը: Վ. Կիրակոսյանը, հետևելով բանաստեղծի ցանկությանը, պահպանված ձեռագրերի, մամուլում տպագրված մի շարք բանաստեղծությունների մասին նրա նշումների միջոցով աշխատել է վերականգնել այդ շարքերը՝ դրանց մեջ մտնող ստեղծագործություններով: «Կարմի գիրքը» որպես ջարդերի ողբերգական արտահայտությունը, քանի որ սերտորեն կապված էր Սևակի ազգային-քաղաքական ստեղծագործությունները ներկայացնող «Վերջին հայերը» շարքի հետ, ուստի դրանք քննվել են միասնաբար: Նույնը վերաբերում է նաև «Քառս» և «Չհասկացվածները» շարքերին, իսկ ծավալով ամենամեծը եղող «Միրո գիրքը» վերլուծված է առանձին գրքով: Շնորհիվ նման մոտեցման՝ Վ. Կիրակոսյանը հարազատորեն է ներկայացրել Սևակի ստեղծագործությունների գաղափարագեղարվեստական միասնությունը:

Առանձին գլուխ է նվիրված արևմտահայ իրականության գրական հասարակական միջավայրի ընդհանուր բնութագրմանը: Գիրքը եզրափակվում է «Բժշկի գիրքէն փրցուած էջերի» վերլուծությամբ, որն ընթերցողի առջև բացում է բժիշկ բանաստեղծի ստեղծագործական աշխարհի «մասնագիտական» կողմերը:

«Ռուբեն Սևակ (կյանքն ու ստեղծագործությունը)» մենագրության մեջ արծարծված թեմաներն առավել լայն ընդգրկմամբ ներկայացված են Վ. Կիրակոսյանի երկրորդ՝ «Արևմտահայ բանաստեղծությունը (1890–1907 թթ.)» (Երևան, 1985 թ.) գրքում: Երբ նա ձեռնամուխ եղավ այս ուսումնասիրությունը գրելուն, արդեն լույս էին տեսել արևմտահայ գրողներին և XX դարասկզբի արևմտահայ բանաստեղծական շարժման տարբեր խնդիրներին նվիրված մի շարք ուսումնասիրություններ: Այս հետազոտություններն առաջադրեցին հաջորդ խնդիրը: Յուրաքանչյուր հեղինակի դիտարկել գրական ընդհանուր շարժման համապատկերում, տեսական ընդհանրացումներով ներկայացնելով որոշակի ժամանակաշրջանի գրական ընթացքը և ուղղությունները: Քննության նման եղանակով գրական իրողությունների իրարահաջորդ ընթացքը վերածվում է ներքին օրինաչափություններով զարգացող ստեղծագործական շարժման, գրականության պատմությունը տեսական իմաստավորում է ստանում և տեսությունը հարստանում է պատմության ընձեռած փաստերով:

Նման մոտեցմամբ է Վ. Կիրակոսյանը քննում 1890–1907 թթ. արևմտահայ բանաստեղծությունը գրական - պատմական, սոցիալ - հոգեբանական, պոետիկայի և այլ տեսանկյուններից: Հեղինակը կատարել է իր առջև դրված խնդիրը՝ գեղարվեստական-պատմական առաջընթացի շղթայում պարզել բանաստեղծական մտածողության զարգացման գլխավոր ուղղությունները, որակական անցման կարևոր աստիճանները՝ բացահայտելով ու բնորոշելով այն մնայուն արժեքները, որոնք որպես գրական շարունակական ավանդույթ, պետք է անցնեին զարգացման հետագա փուլերին: Ուսումնասիրության երեք գլուխներում հեղինակն աշխատում է բնութագրել աշխարհի հանդեպ բանաստեղծական նոր հայացքի ձևավորման ու զարգացման կարևոր ան-

ցումային օղակները: Առաջին գլխում քննվում է հետդուրյանական շրջանի արևմտահայ բանաստեղծության ընթացքը և գեղարվեստական մտածողության նոր ձևերի հաստատումը: Երկրորդ գլուխը հիմնականում նվիրված է Ինտրայի ստեղծագործություններին: Երբ Վ. Կիրակոսյանը գրում էր այս աշխատանքը, Ինտրայի գործերի մեկնաբանումն ու արժևորումը հակասական բնորոշումներով դեռևս նոր էր սկսվել: Գրողի ստեղծագործությունը հմուտ հետազոտողը դիտարկում է որպես գեղարվեստական ինքնատիպ համակարգ, ուր գործում են աշխարհի քնարական ճանաչման յուրահատուկ օրենքները: Գրականագետը նշում է, որ, ի տարբերություն Ինտրայի, Մեծարենցի քնարական աշխարհի հիմքում ընկած է անհատի իրական կեցությունն իրական աշխարհում: Աշխատանքի երրորդ գլխում Մեծարենցի ստեղծագործությունների նման ելակետից քննությամբ ներկայացվում է աշխարհի ինտրայանական հայեցողության միստիկական երանգներից բանաստեղծական մտածողության աստիճանական ազատագրման ընթացքը: Առավել մեծ ընդհանրացվածությամբ քննվում են արևմտահայ բանաստեղծության առնչություններն պառնասական, սիմվոլիստական, իմպրեսիոնիստական ուղղությունների հետ:

Այս ուսումնասիրությամբ հեղինակը լուծել է իր առջև դրված գլխավոր խնդիրը՝ բացահայտել ու մեկնաբանել երկու դարերի սահմանագծի արևմտահայ քնարերգության գեղարվեստական համակարգը:

Վ. Կիրակոսյանը հեղինակն է նաև XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ ու արևմտահայ ոչ այնքան հանրաճանաչ բանաստեղծների կյանքի և գրականության քննությանը նվիրված մի աշխատանքի, որը տեղ է գտել «Հայ նոր գրականության պատմության» հինգերորդ հատորի իններորդ գլխում, և որը վերնագրված է՝ «Այլ բանաստեղծներ»: Այս գլխի երկրորդ մասը, դարձյալ նրա աշխատությամբ, նվիրված է Ռուբեն Սևակին:

Վ. Կիրակոսյանի աշխատանքները տեղ են գտել նաև «Գրական դեմքեր» (Երևան, 1976 թ.), «Հայ քննադատության պատմություն» (Երևան, 1985 թ.), «Հայկական ռեալիզմի տեսության և պատմության հարցեր» (Երևան, 1987 թ.) կոլեկտիվ աշխատություններում ու ժողովածուներում:

Գրականագետը իր մասնակցությունն է բերում նաև հանրակրթական դպրոցների տարբեր դասարանների համար նախատեսված «Հայ գրականության պատմության» դասագրքերի գրությանը:

Ավելի քան տասը տարի է, որ Վ. Կիրակոսյանը, որպես խմբի ղեկավար, զբաղված է մի նվիրական աշխատանքի՝ «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության» կազմմամբ: Արդեն լույս են տեսել առաջին և երկրորդ հատորները: Առաջինն ընդգրկում է Թումանյանի ծնվելուց մինչև 1908 թ. ընկած շրջանը (Երևան, 2016 թ., 860 էջ), իսկ երկրորդը՝ 1909–1914 թթ. (Երևան, 2016 թ., 860 էջ): Առաջին հատորի սկզբում Վ. Կիրակոսյանը ներկայացնում է տարեգրության կազմման սկզբունքնե-

ը: Այն միտքն է ընդգծվում, որ տարեգրությունը ոչ թե վերլուծություն է, այլ ներկայացնում է Հովհ. Թումանյանի կյանքի ընթացքը և ստեղծագործական գործունեությունն ըստ փաստերի ու վավերագրերի, որի համար նա միանգամայն իրավացիորեն գրում է. «Տարեգրությունը ամենաօբյեկտիվ գրականագիտական ժանրն է»: Այս հանգամանքը պայմանավորված է տարեգրողի չեզոքությամբ, քանի որ վերջինս ներկայացնում է գրողի կյանքի ընթացքը ծնվելուց մինչև վախճանվելը: Այս մասին Կիրակոսյանը գրում է. «Տարեգրություն կազմողը իրեն պատասխանատու պիտի զգա ներկայացվող յուրաքանչյուր փաստի, գրողի անձնական ու ստեղծագործական կենսագրության յուրաքանչյուր մանրամասնի համար» (էջ 5): Թումանյանի կյանքի տարեգրությունը կարևորվում է ոչ միայն մեծ բանաստեղծի կյանքը և ստեղծագործական ժառանգությունը առավել համակողմանի ըմբռնելու տեսանկյունից, այլև սերտորեն միահյուսված է՝ 1890–1920-ական թվականների առաջին կեսի հայ գրականության և հայ ժողովրդի պատմությանը:

Գիրքը կազմված է հետևյալ սկզբունքով: Ըստ տարեթվերի, որոնց ներսում ըստ ամիսների և ամսվա օրերի ներկայացվում են Թումանյանի կյանքին վերաբերվող փաստերը, ինչպես նաև նրա ստեղծագործությունների գրության ժամանակը, գրության հետ կապված հանգամանքները, մամուլի արձագանքն ու Թումանյանի պատասխանները: Ըստ այս ժամանակային ընթացքի, բերվում են փաստերը ու նշվում փաստի աղբյուրը, հաղորդվում են վերջինիս հետ կապված օժանդակ այլ տեղեկություններ: Այսպես, ըստ օրերի, ամիսների ու տարիների հյուսվում է Թումանյանի կյանքի տարեգրությունը և ամբողջանում է Ամենայն Հայոց բանաստեղծի կերպարը:

Սկզբնապես ծրագրված էր Թումանյանի տարեգրությունը հրատարակել երեք հատորով: Այժմ խմբագրման ընթացքում գտնվող երրորդ հատորն ավարտվում է 1918 թվականով: Հետևաբար, ողջ Տարեգրությունը նվազագույնը կկազմի չորս հատոր, թեև հնարավոր է, որ 1919–1923 թթ. ընդգրկող նյութի համար հարկավոր լինի հրատարակել նաև հինգերորդ հատորը:

Վ. Կիրակոսյանը այսօր ևս իր կարևոր մասնակցությունն է բերում ինստիտուտի գիտակազմակերպական կյանքին, որպես խմբի ղեկավար, ինստիտուտի գիտական ու մասնագիտական խորհուրդների անդամ և հայցորդների ու ասպիրանտների գիտական ղեկավար, որոնց փոխանցում է թե՛ իր գիտելիքները և թե՛ տասնամյակների ընթացքում ամբարած այն նյութերը, որոնք դեռևս գիտական շրջանառության մեջ չեն դրվել:

Այսպես կարող է վարվել միայն թումանյանական հոգևոր շռայլությանը հաղորդակցվողը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ,
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ